



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

03.06.2022թ.

### ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ «ՎԵՐՁԻՆ ԶԱՆԳ»- Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ շրջանավարտներ,

ջերմորեն շնորհավորում եմ Ձեր կյանքի ամենահիշարժան օրվա՝ «Վերջին զանգ»-ի կապակցությամբ:

Այս պահին Ձեր սրտերում ամենատարբեր զգացողություններ և տրամադրություններ են և դա բնական է. չէ՞ որ այսօր նոր կյանք եք մտնում:

Միրելի՛ շրջանավարտներ,

Ձեր առջև այսօրվանից նոր դռներ ու հորիզոններ են բացվում՝ բազում փորձություններով, ուրախություններով, հետաքրքրություններով, ինչու՞ չէ, նաև խնդիրներով ու դժվարություններով:

Անկեղծորեն մաղթում եմ, որ կարողանաք ճիշտ օգտագործել Ձեզ տրված հնարավորությունները, կյանքի այս նոր շրջափուլում կարողանաք քաղել միայն լավը, գեղեցիկը, վեհը, օգտակարը. այն գիտելիքները, որ ստացել եք Ձեր ուսուցիչներից՝ Ձեր հարազատ դպրոցում, կարողանաք օգտագործել միայն հաջողությունների գրանցման, նոր բարձունքների նվաճման և մեր հայրենիքը շենացնելու համար:

Մշտապես ապավինեք սեփական սկզբունքներին ու արժեքներին՝ արժանին մատուցելով Ձեր ծնողներին, ուսուցիչներին, ընկերներին:

Միրեք հայրենիքը, ու ամբողջ ներուժն օգտագործեք մեր երկրի զարգացման համար:

Հարգելի՛ ուսուցիչներ, ծնողներ,

Ձեզ ևս շնորհավորում եմ այս կարևոր օրվա կապակցությամբ: Դուք հերոսական աշխատանք եք կատարում՝ կրթելով և դաստիարակելով ՀՀ վաղվա քաղաքացուն:

Շնորհակալություն գործադրած ջանքերի, սիրո և անկեղծ նվիրումի համար:

Համոզված եմ, որ մեր շրջանավարտները Ձեր փոխանցած գիտելիքներով նպաստելու են Հայաստան աշխարհի հզորացմանն ու շենացմանը ու մեզ հպարտանալու բազում առիթներ են տալու:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ ու մաղթում տոնական բարձր տրամադրություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ